

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ԽՏՐՈՒԹԻՒՆ ԿԵՐԱԿՐՈՑ. — ՊՂՄԵԱՆՆԵՐ. —
Ի ԲՆԷ՛ ՊԻՂՄԵՐ. — ՍՐԲՈՒԹԻՒՆ ՊՂՄԵԼՈՑ

Մարդկային ստամորան ամենակեր
եղած է միշտ ի բնէ, եւ փորձեր է ուտել՝
ինչ որ գտեր է բնութեան մէջ ծասքելի
եւ հաշտ քմացք հետ: Իւր վայրենութեան
շրջանին չէ խորշեր իւր նմանիքն անգամ
յօշոտել եւ ուտել: Քաղաքակրթութիւնը
բարեկարգեց մարդուն սնունդն ալ. բայց
ամենակերութեան հին բնազդը մոխրի տակ
ծածկուած կը մնայ միշտ, եւ կը տեսնենք
տակաւին անոր զարթնումը սովի տագ-
նապին մէջ: Կրօնքը, որ քաղաքակրթու-
թեան ռահվիրայն եղաւ, իւր ձեռքն ա-
ռաւ մարդուն սննդեան խնդիրն ալ, ար-
գելլով անոր խառնիխուռն ուտել ամէն
բան, եւ զատելով ուտելին զգուշալիէն,
որոց առաջինը սուրբ կոչեց, եւ երկրոր-
դը՝ պիղծ: Այս է մեր հոս քննելի «խը-